# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար բազկաթոռների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«02» օգոստոսի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Չեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 12-րդ օրվա (31.07.2023թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 01.08.2023թ.՝ ժամը 11:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Բազկաթոռ՝ ղեկավարի | 4320000 |
| 2 | Դրոշներ | 945000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| Լեվան ՍՊԸ | Արմավիր, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8 |
| «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ | Ք. Գավառ Գեղեոն Միքայելյան տուն 69 |
| Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | ք. Երևան, Արշակունյաց պ., 54/1 շ., 62 բն. |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | Լեվան ՍՊԸ | 7500000 | 20% | 9000000 | 7500000 | 20% | 9000000 | Մերժված |
| 2 | «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ | 784000 | 20% | 940800 | 580000 | 20% | 696000 | |
| 2 | Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ | 990000 | 0% | 990000 | 675000 | 0% | 675000 | |

էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 01.08.2023թ.՝ ժամը 11:30-ին և 2-րդ չափաբաժնի մասով «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

**7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. օգոստոսի 04-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ______________ Նորայր Աղամալյան

______________ Տիգրան Ջեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Գայանե Դադիվանյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

Դատական դեպարտամենտի կարիքների համար բազկաթոռների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «04» օգոստոսի 2023թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մուտքագրման (լրացման) մասին.**

«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.**

«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում՝ 02.11.2021թ.-ից մինչև 02.11.2023թ., 01.03.2022թ.-ից մինչև 01.03.2024թ., 29.03.2022թ.-ից մինչև 29.03.2024թ., 08.04.2022թ.-ից մինչև 08.04.2024թ., 13.04.2022թ.-ից մինչև 13.04.2024թ. ժամկետներով ներառված «Քնար Շին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08422096) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Գավառ Գ.Միքայելյանի փ. 69» հասցեն, 07.04.2023թ.-ից մինչև 07.04.2025թ., 13.05.2023թ.-ից մինչև 13.05.2025թ. ժամկետներով ներառված «ՄԱՇԽ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425696) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Գավառ Գ. Միքայելյան փ. 69» հասցեն և «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08428952) հայտով ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված «Ք. Գավառ Գեղեոն Միքայելյան տուն 69» հասցեն միանման են («ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտում ներառված և էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերում նշված տեղեկատվության համաձայն՝ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրենն է Ի. Ավագյանը, հիշյալ փաստաթղթերը հաստատված են Իշխան Ավագյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջներով, մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, գրությամբ դիմել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի և վերոնշյալ ընկերությունների հնարավոր փոխկապակցվածության հանգամանքը բացահայտելու համար:

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ______________ Նորայր Աղամալյան

______________ Տիգրան Ձեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Գայանե Դադիվանյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

Դատական դեպարտամենտի կարիքների համար բազկաթոռների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» օգոստոսի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Տիգրան Ջեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

**1. Տվյալներ՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ.**

Գնահատող հանձնաժողովի 04 օգոստոսի 2023թ. նիստի N 3 արձանագրության 2-րդ կետի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն ուղղված 04 օգոստոսի 2023թ. N ԴԴ-3-Ե-ԴԴ/1560-23 Ե-5752 գրությանը (կցվում է) ի պատասխան 2023 թվականի օգոստոսի 09-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացվել է 08.08.2023թ. N-25.9/36071-2023 գրությունը (կցվում է):

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված վերոնշյալ գրությամբ արձանագրված է, որ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» (ՀՎՀՀ՝ 08428952) և «ՄԱՇԽ» (ՀՎՀՀ՝ 08425696) ՍՊ ընկերությունների միակ մասնակից և տնօրեն է հանդիսանում Իշխան Ռազմիկի Ավագյանը, «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» և «ՄԱՇԽ» ՍՊ ընկերությունները «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 25-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված հիմքերով հանդիսանում են փոխկապակցված անձինք:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետը և ղեկավարվելով հիշյալ կարգի 67-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **«ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ մերժված հայտերի և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

2.1. 1-ին չափաբաժնի մասով Լեվան ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի նշված չափաբաժնի մասով ներկայացված հայտը eauction.armeps.am համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

2.2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի հայտը մերժել,
- գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- հաստատել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ______________ Նորայր Աղամալյան

______________ Տիգրան Ջեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Գայանե Դադիվանյան

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am*

**№ ԴԴ-3-Ե-**ՊՊ/1560-23 Հ-5752

**«**04**» օգոստոսի 2023թ.**

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ Տ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ տիկին Մկրտչյան,*

Դատական դեպարտամենտի կարիքների համար բազկաթոռների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն: «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությամբ (Հավելված N 1) հայտարարել և հավաստել է, որ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը ուսումնասիրելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 02.11.2021թ.-ից մինչև 02.11.2023թ., 01.03.2022թ.-ից մինչև 01.03.2024թ., 29.03.2022թ.-ից մինչև 29.03.2024թ., 08.04.2022թ.-ից մինչև 08.04.2024թ., 13.04.2022թ.-ից մինչև 13.04.2024թ. ժամկետներով ներառված «Քնար Շին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08422096) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Գավառ Գ.Միքայելյանի փ. 69» հասցեն, 07.04.2023թ.-ից մինչև 07.04.2025թ., 13.05.2023թ.-ից մինչև 13.05.2025թ. ժամկետներով ներառված «ՄԱՇԽ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425696) մասով որպես մասնակցի գտնվելու կամ բնակության վայր նշված «ք. Գավառ Գ. Միքայելյան փ. 69» հասցեն և «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08428952) հայտով ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում (Հավելված N 1) որպես մասնակցի գործունեության հասցե նշված «Ք. Գավառ Գեդեոն Միքայելյան տուն 69» հասցեն միանման են («ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտում ներառված և էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերում նշված տեղեկատվության համաձայն՝ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրենն է Ի. Ավագյանը, հիշյալ փաստաթղթերը հաստատված են Իշխան Ավագյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետով սահմանված է, որ մասնակցի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, իսկ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված անձանց շրջանակը սահմանված է Կարգի 119-րդ կետով:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի պահանջներով՝ մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման նպատակով, խնդրում ենք նշված կետով սահմանված ժամկետում՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել արդյո՞ք «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ն և վերոնշյալ ընկերությունները Կարգի 119-րդ կետի իմաստով համարվում են փոխկապակցված անձինք, թե ոչ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ**

**ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ**
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3. Հեռ. (374 10) 201461
*Էլ. փոստ* info@e-register.am

N-25.9/36071-2023
«08 » 08. 2023 թ.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ**
**ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

N-12105
090823

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Ի պատասխան ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն) ուղղված Ձեր թիվ ԴԴ/1560-23 գրության՝ հայտնում եմ, որ համաձայն իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան) առկա տեղեկությունների՝

1. «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» (ՀՎՀՀ՝ 08428952) և «ՄԱՇԽ» (ՀՎՀՀ՝ 08425696) ՍՊ ընկերությունների միակ մասնակից և տնօրեն է հանդիսանում Իշխան Ռազմիկի Ավագյանը։
2. «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 08422096) միակ մասնակից է հաղիսանում Քնարիկ Մնացի Սիմոնյան, իսկ տնօրեն՝ Իշխան Ռազմիկի Ավագյանը։

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի՝ «***փոխկապակցված իրավաբանական անձինք՝*** *իրավաբանական անձինք,*

*ա. որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,*

***բ. որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն,***

*գ. որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ « ***փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝*** *ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝*

*ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,*

*բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները,*

*գ. ֆիզիկական և իրավաբանական անձինք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի՝« *փոխկապակցված ֆիզիկական անձինք՝* ***անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը****, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.»:*

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» և «ՄԱՇԽ» ՍՊ ընկերությունները՝ Օրենքի 3-րդ հոդվածի 25-րդ կետերի «ա» և «բ» ենթակետերով սահմանված հիմքերով հանդիսանում են փոխկապակցված անձինք :

Միաժամանակ, հիմք ընդունելով Օրենքի 3-րդ հոդվածի 25-րդ կետը՝ հայտնում եմ, որ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» և «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊ ընկերությունների մասով փոխկապակցված լինելու հանգամանքը հաստատող փաստեր առկա չեն, իսկ մնացած հիմքերի մասով Գործակալությունը տեղեկատվության չի տիրապետում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: Tatev Mkrtchyan

**ՏԱԹԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ**

Կատարող՝ Մարինե Մուխսյան
Գրանցման և հաշվառման բաժին
Հեռ.՝ 010 20-14-63

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

**Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բազկաթոռների և դրոշների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

| **Չափաբաժնի համար** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 1 | Ղեկավարի բազկաթոռ՝ հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի խաչուկով, երեսպատած բնական փայտով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ 6սմ սպունգի հաստությամբ: Կողային հենակները՝ բնական փայտ: Թիկնակը՝ կարգավորվող, նստատեղը՝ բարձրացնելու և իջեցնելու հնարավորությամբ: Թիկնակը և նստատեղը՝ պատրաստված մեկ ամբողջական նրբատախտակից: Նստատեղի լայնքը՝ 50սմ, խորությունը՝ 47սմ: Բազկաթոռի բարձրությունը՝ գետնից մինչև թիկնակի վերին հատվածը (բարձրացված վիճակում) 120սմ: Պաստառապատված բնական կաշվով: Գույնը՝ սև: Չափսերի թույլատրելի շեղումը՝ | Լևան ՍՊԸ | <u>1-ին կետի</u><br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 1-ին չափաբաժնի մասով Լևան ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի նշված չափաբաժնի մասով ներկայացված հայտը eauction.armeps.am համակարգի կողմից համարվել է մերժված: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | +, - 2%: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը նախապես պետք է համաձայնեցնել Գնորդի հետ: | | | |
| 2 | Եռագույն դրոշ՝ պատվանդանով. կտորը՝ բամբակ, վուշե խառը, մետաքս, բուրդ կամ 100% պոլիէսթեր (կարվածքով), վերևից ներքև կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Չափսերը. լայնություն՝ 1մ, երկարություն՝ 2մ: Դրոշի 3 եզրերը պետք է եզրավորված լինեն ոսկեփայլ երիզներով (ծոպերով): Պոչն ու պատվանդանը՝ փայտից, լաքապատ՝ մուգ շագանակագույն, | «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ Գայանե Հակոբյան Գործի Ա/Ձ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ԱՎԳՈՄԵ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջներով: Միաժամանակ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պոչի բարձրությունը՝ 2.2մ-2.4մ, տրամագիծը՝ 28մմ-32մմ, պատվանդանի բարձրությունը՝ 3.5սմ-4.0սմ, տրամագիծը՝ 30սմ-35սմ: Համաձայն «ՀՀ դրոշի և ՀՀ զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 888-Ն որոշման: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և փաթեթավորված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների արտաքին տեսքը նախապես պետք է համաձայնեցնել Գնորդի հետ: | | | N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝<br>- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի հայտը մերժվել է,<br>- գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա: |

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/29» ծածկագրով գնումների համակարգող Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010511783:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ: